հանդապետի, որ իւր բարեսրտութեամբը կ'օգնէ այսպիսի մարդասիրական գործոց։

Մնաց՝ Վ. Ալբրամեան Սմբատեանց։

Մ. ՑԱԿՈՐ ՄԱՀՏԵՍԻ ԵՍԱՅԵԱՆ ,

Հրամանաւ և Հայրապետական Կոնդակաւ Վ. Հ. Կաթողիկոսի՝ Մայր Աթոռոյս՝ Օմիւռնիոյ և վիճակաց մէջ ունեցած կալուածոց վերայ Վերատեսուչ կարգեցաւ Մեծ. Պ. Մահտեսի Յակոբ Մ. Նասյեան։

Այս առթիւ կարևոր կը համարիմք յարակցել, զի Օմիւռնիոյ Ազգայինք 'ի նախնեաց հետէ բազում և ազգի ազգի նուիրաբերութեամբք իւրեանց ջերմեռանդին սրտից և հոգեսէր զգացմանց հաւատիքը փառաւոր հանդիսացուցած են առ Մայր Աթոռս Ս. Էջմիածին. անտարակոյս եմք՝ զի տեղւոյն Գեր. Սրբազան Առաջնորդ Հայրը և Ազնուամեծար Իշխանք և թէ առ հասարակ ջերմեռանդ և բարեպաշտ ժողովուրդք՝ այսուհետև իսկ ըստ հարազատ նմանութեան հարցն իւրեանց՝ ինքեանք ևս աջակցելով ընդ նորընտիր Վերատեսչի՝ քաղցր պարտաւորութեամբք պիտի ջանան արդիւնաւորել Ս. Աթոռոյս անդ 'ի Օմիւռնիա ունեցած կալուածները. որով և մեծապէս ուներն նպաստել աստ 'ի Ս. Էջմիածին զանազան ազգօգուտ հաստատութեանց ներկայ և ապագայ արդիւնաւէտ և բաղմաշահ յառաջադիմութեանց, որք արդարև դրամական մեծ նպաստներու կարօտութիւն ունին, որոց ըստ նիւթականին և ըստ բարոյականին օգնել և սատարել ամենայն ճշմարիտ Հայորերոյ սրբազան և անհրաժեշտ պարտքն է։

Վ. Հ. Կաթողիկոսի վերադարձի և Ընուան տօնախմբութեան առիթներով ընթերցեալ ճառերն են, զորս անցեալ ամսագրով խոստացանք հրատարակել։

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՏԷՐ

Հ. Նորհաւոր Գարդ և Տօնախմբութեան Մեծի Վահանայապ՝ գէր։

Այսօր յեթերաձեմն արփի զոգցես յեղաշրջեալ նոր շրջան առնու, վասնզի ծագէ մեզ օր նորապայծառ և աւետէ ժամ ուրախազարդ. յորում զյոգնաշխատ զՀայրապետդ վերադարձեալ 'ի Տրփիսպ 'ի գահս Լուսաւորչեան տեսանեմք. այսօր և լուսածին Մայրս մեր Կաթուղիկէ սուրբ Էջմիածին լցեալ հոգեղուարձ խնդութեամբ բերկրի որդւովքն հանդերձ. այսօր լուսաթև հրեշտակ Հայոցս կանգնեալ 'ի կատար Մասեաց հնչեցուցանէ 'ի Հայաստան զարձագանգս ուրախաշարժ. այսօր ընդ օտար աշխարհ ցրուեալ որդիքն Հայոց՝ ցընծալով 'ի սիրտ և 'ի հոգի և աստ սլացեալ մտօք տօնախմբեն ընդ մեզ զանուանակոչութիւն գերազգեն յաջորդիդ զարաւոր պետութեան ազգիս ըստ հոգւոյ. այսօր լերինք ընդ բլուրս խոնարհեալ միահաւասար ցնծան ընդ փառս ազգիս. այսօր Հայկազանցս փառաց հոչակ ընդ ամենայն տեղիս թող հնչեսցի. այսօր նաև բնութիւնն ինքնին հրաւիրէ մեզ յուրախութիւն՝ զի մարդկայինս ընութեան է սովորութիւն ուրախանալ ընդ 'ի հեռուստ դարձ բարեկամին։ Ապա այսօր ոգեպիսի ուրախութիւն, ոգեպիսի խնդութիւն և ոգեպիսի բերկրանք՝ ոչ զգան սիրտք մեր ընդ Դարձ ազգասէր և գթառատ Հօրդ յԱթոռս՝ և ընդ Տօնախմբութիւն վեհափայլ Անուան Զերոյ, և այս կրկնակի խնդութեանցս հանդէսք՝ ոչ այնչափ ուրախացուցանեն զսիրտս մեր՝ որչափ ազգասիրական գործք Ձեր շքեղացուցանելով զաւուրս յիշատակ՝ յորոմն 'ի սիրտ մեր ուրախութիւնք բերկրապատար. և ոչ այնչափ խնդութիւնքն վաղանցուկ հրաւիրեն մեզ յայս հանդէս հոգևոր՝ որչափ քաղցրագութի սէր Ձեր՝ յուրախութիւն սիրահամրոյր. զի սէր զոլով անմահ արդարև անմահ առնէ և գլխաստակ իւր. վասնորոյ է մեզ այսօր օր խնկելի և փառք նախանձելի, յորում ստիպիմք հայրենասէր վառ և բորբոք սիրով հրճուիլ ընդ շնորհափայլ Դարձ և Տօնախմբութիւն Աստուածապատիւ Հօրդ. զի զի՞նչ զոյ պղ ևս Հայկաղեանս տարաբաղդ ազգի 'ի նախկին իւրոյ ճոխութեանց՝ եթէ ոչ սոսկ գահս